*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:*

<u>4.Հարցում կատարելու մասին</u>

*(Ա. Հովհաննիսյան)*

ԱԱԿ-17/3-ՇՀԱՊՁԲ-15/1 ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերի 7.5-րդ կետի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը, ընդ որում նշված հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին հրավերի 7-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:*

**<u>5. Շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի (տեղեկությունների) ներկայացման մասին</u>**

*(Ա. Հովհաննիսյան)*

Ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:*

**<u>6.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>**

*(Ա. Հովհաննիսյան)*

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել *ԱԱԿ-17/3-ՇՀԱՊՁԲ-15/1* ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի հրավերով նախատեսված՝ որակավորման չափանիշների գնահատման գնահատող հանձնաժողովի արդյունքների ամփոփման օրը <<Ամասիայի առողջության կենտրոն>> ՓԲԸ, գ.Ամասիա փողոց 2 N 19, 2-րդ հարկ տնօրենի ընդունարան հասցեում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0:*

Հանձնաժողովի
նախագահ՝ Ա. Հովհաննիսյան
անդամներ՝ Ա.Հակոբյան
Կ.Տոմոյան
քարտուղար՝ Է.Գրիգորյան